



CENTER FOR CONSTITUTIONAL STUDIES,
LEGISLATIVE DEVELOPMENT AND REFORM MONITOR

ՀՐԱՏԱՊ ԶԵԿՈՒՅՑ

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ 16.01.24 ՀՕ-32-Ն ՕՐԵՆՔՈՎ ԼՐԱՑՎԱԾ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 311-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*** ԶԵԿՈՒՅՑԸ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ Է ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՀՐԱՏԱՊ ՁԵԿՈՒՅՑ¹

ՀՀ քրեական դատավարության

**օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 16.01.24 ՀՕ-32-Ն
օրենքով լրացված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ
մասի վերաբերյալ**

Բովանդակություն

Բաժին 1

1.1. Ընդհանուր նկատառումներ.....3
1.2. Օրենսգրքի լրացված մասի բովանդակությունը.....3
1.3. Օրենսգրքի լրացված մասի գործնական անհրաժեշտությունը.....4
1.4. Օրենսգրքի լրացված մասով վրա հասնող լուծումը.....4

Բաժին 2

*2.1. Օրենսդրական լրացված մասի համատեղելիությունն անձի հիմնական
իրավունքների հետ.....6*
2.2. Եզրակացություններ.....11
2.3. Առաջարկություններ.....11

¹ Ձեկույցը պատրաստվել է քրեական արդարադատության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկման ծրագրի շրջանակներում:

Բաժին 1

1.1. Ընդհանուր նկատառումներ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 16.01.24 ՀՕ-32-Ն օրենքով (այսուհետ՝ նաև Նախագիծ), ի թիվս այլնի, լրացվեց նաև ՀՀ քրեական դատավարության մասին օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 311-րդ հոդվածը 2-րդ մասով:

Ի տարբերություն նշված փոփոխություններն ու լրացումները նախատեսող այդ օրենքի (16.01.24 ՀՕ-32-Ն օրենքի) ընդունմամբ բերվող այլ փոփոխությունների/լրացումների՝ կարևոր է նկատել, որ Օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասի լրացումը կատարվել է *առանց որևէ հիմնավորում ներկայացնելու*²:

1.2. Օրենսգրքի լրացված մասի բովանդակությունը

Օրենսգրքի 311-րդ հոդվածը 2-րդ լրացված մասով նախատեսվում է նախնական դատալսումների ընթացքում որոշակի հաջորդականությամբ քննարկման ենթակա հարցերից մեկը՝ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը կարող է կողմի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ քննարկվել *առաջնահերթության* կարգով:

Ըստ այդմ՝ Օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ դատարանը կարող է կալանքի/տնային կալանքի կիրառման (դրա երկարաձգման) հարցը առաջնահերթության կարգով քննարկել և լուծման՝ **առանց** մինչ այդ հարցի **քննարկումը** (և այդ հարցի քննարկման **ընթացքում**) Օրենսգրքի 311-րդ հոդվածով նախատեսված 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հարցերին, մասնավորապես՝ ինքնաբացարկի, ընդդատության, վարույթը/հետապնդումը բացառող հանգամանքների (առերևույթ) բացակայության հարցերին անդրադառնալու:

² Տե՛ս <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=14556&Reading=0>:

1.3. Օրենսգրքի լրացված մասի գործնական անհրաժեշտությունը

Թեև այդպիսի լրացման հիմնավորումը, ինչպես նշվեց, փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծում բացակայում էր, այնուամենայնիվ, այն պայմանավորված էր իրավակիրառ պրակտիկայում առաջ եկող հետևյալ խնդրով. նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ վարույթն իրեն ընդդատյա չէ՝ դատարանը կայացնում է վարույթն ըստ ընդդատության փոխանցելու մասին որոշում: Նման դեպքերում, սակայն, հաճախ պատահում է, որ վարույթի ըստ ընդդատության փոխանցվելու ժամանակահատվածում լրանում է կալանքի տակ գտնվող մեղադրյալի կալանքի/տնային կալանքի ժամկետը, մյուս կողմից՝ ըստ էության անհնար է դառնում (մինչ փոխանցված վարույթի ստացումը) մեղադրյալի կալանքի/տնային կալանքի երկարաձգման հարցի քննարկման հնարավորությունը: Վիճակն էլ ավելի է սրվում, երբ նման պայմաններում շարունակվում են պահպանվել անձին կալանքի/տնային կալանքի տակ պահելու հիմքերը:

Մեծապես հենց այդ հանգամանքով է պայմանավորվում և նման իրավիճակներում անձի նկատմամբ խափանման միջոց կիրառելու(այն երկարաձգելու) հարցի քննարկման հնարավորություն է ընձեռում Օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ լրացված մասը՝ թույլատրելով խափանման միջոցի կիրառման հարցի քննարկումն իրականացնել առաջնահերթության կարգով:

1.4. Օրենսգրքի լրացված մասով առաջարկվող լուծումը

Ելնելով օրենսդրական լրացման տրամաբանությունից, երբ մեղադրյալի կալանքի/տնային կալանքի ժամկետը մոտենա ավարտին, դատարանն **իրավասու կլինի քննարկելով** Օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2 և 3-րդ կետերով նախատեսված հաջորդական հարցերը (որոնց մեջ է, այդ թվում՝ ընդդատության հարցը)՝ միանգամից քննել և լուծել մեղադրյալի կալանքի/տնային կալանքի ժամկետի երկարաձգման հարցը, և խափանման միջոցի հարցի լուծումից հետո նոր միայն

դատարանը (ըստ անհրաժեշտության) կանդրադառնա Օրենսգրքի 311-րդ հոդվածի
1-ին մասի 1-ին, 2- և 3-րդ կետերով նախատեսված հարցերին:

Բաժին 2.

2.1.Օրենսդրական լրացված մասի համատեղելիությունն անձի հիմնական իրավունքների հետ

Օրենսդրական այս լրացումը, սակայն, խնդրահարույց է և վտանգում է մարդու որոշ հիմնական իրավունքներ:

Մասնավորապես, օրենսդրական լրացմամբ Օրենսգիրք է ներմուծվում խափանման միջոցի և, այդ թվում նաև՝ կալանքի/տնային կալանքի կիրառման/դրա ժամկետի երկարաձգման հարցի քննարկման և լուծման հնարավորություն նախնական դատալսումներում *առանց վարույթի դատարանին ընդդատյա լինելու հարցի քննարկման:*

Նման պայմաններում, հնարավոր է, որ ձևավորվի այնպիսի իրավակիրառ պրակտիկա, ըստ որի՝ դատարանը, ստանալով վարույթը, մինչ ընդդատության հարցի պարզումը քննարկի և լուծի խափանման միջոցի, այդ թվում՝ կալանքի/տնային կալանքի/դրա ժամկետի երկարաձգման հարցն առաջնահերթության կարգով, իսկ այդ հարցի դրական լուծումից հետո, օրինակ, արձանագրի, որ վարույթն իրեն ընդդատյա չէ՝ կայացնելով վարույթն ըստ ընդդատության *փոխանցելու մասին որոշում:*

Ընդ որում՝ օրենսդրական լրացմամբ ներմուծված կարգավորման **տրամաբանությունից է բխում**, որ խափանման միջոցի, այդ թվում՝ կալանքի/տնային կալանքի/դրա ժամկետի երկարաձգման հարցի քննարկման ժամանակ ընդդատության (դատավորի ինքնաբացարկի, հետապնդումը դադարեցնելու հիմքերի) հարց(եր)ը *կարող է (են) սկզբում չքննարկվել:*

Սակայն, այդպիսի պայմաններում, խափանման միջոցի, այդ թվում՝ կալանքի/տնային կալանքի/դրա ժամկետի երկարաձգման հարցի քննությունն ու լուծումը, առանց այդ տեսակ հարց(եր)ի լուծման, ուղիղ վտանգում է անձի մի քանի հիմնական իրավունքներ, մասնավորապես՝ արդար դատաքննության իրավունքը և անձնական ազատության իրավունքը:

Անձի արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» պահանջը ոչ միայն վարույթի ըստ էության քննության վրա է տարածվում, այլ նաև տարածելի է կալանքի/տնային կալանքի՝ իբրև խափանման միջոց ընտրելու/այն երկարաձգելու հարցերի քննության վրա³:

Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ վարույթը դատարանին ընդդատյա չէ, սակայն դատարանն անձի նկատմամբ կալանքը/տնային կալանքը որպես խափանման միջոց ընտրելու/այն երկարաձգելու հարցի քննարկմանը նախորդած հատվածում կամ դրա քննարկման ընթացքում չի քննարկում ընդդատության հարցն ընդհանրապես, և կայացնում է անձին կալանավորելու/տնային կալանք կիրառելու մասին որոշում, ապա այդպիսի դեպքում անձի՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» իրավունքը մնում է չպաշտպանված:

Ավելին, այն դեպքերում, երբ առաջնահերթության կարգով լուծելով խափանման միջոցի հարցը, դրանից հետո դատարանը լուծի ընդդատության հարցը, վարույթն փոխանցելով ըստ ընդդատության, ինքնաբերաբար բարձրանալու է կիրառված կալանքի/տնային կալանքի/դրա երկարաձգման ոչ իրավաչափության հարցը, քանի որ *post factum*՝ վարույթն ըստ ընդդատության փոխանցելու որոշմամբ արձանագրվում է, որ դատարանն անձի նկատմամբ կալանքը/տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառելու(դրա ժամկետի երկարաձգման) հարցի քննարկման ժամանակ եղել է «օրենքի հիման վրա չստեղծված դատարան»:

Հենց այս նույն տրամաբանությամբ է, որ օրենսդիրը, նախքան խափանման միջոցի հարցի քննարկումը *նախատեսել էր (մինչ քննարկվող լրացումները)* նաև այնպիսի այլ հարցերի պարտադիր քննարկում, առանց որոնց քննարկման անձի

³ St´u, mutatis mutandis, Yefimenko v. Russia (Application no. 152/04) 12.02.2013 վճիռը: Թեև այս որոշումը վերաբերում էր անձի՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» իրավունքի խախտմամբ վերջնական դատավճռով դատապարտման դեպքին (և ոչ թե անձի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը/տնային կալանքին, ոչ իրավասու դատարանի կողմից կայացվելու հետևանքով ազատությունից ապօրինի զրկմանը դեպքին), այնուամենայնիվ, նշված որոշումը հատկանշական է այն առումով, որ դրանով փաստացիորեն «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» պահանջը, տարածվեց նաև Կոնվենցիայի 5-րդ հոդվածի վրա: Նշված որոշմամբ ՄԻԵԴ-ն արձանագրել էր, որ դատարանի կազմի կողմից անձի դատապարտումը, որը ձևավորվել էր ոչ օրենքով նախատեսված կարգով հանգեցրել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտման:

նկատմամբ կալանքը/տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառելու նկատմամբ կալանքը/տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառելու(դրա ժամկետը երկարաձգելու) հարցի որոշումը դատարանի կողմից ինքնաբերաբար վտանգելու է անձի հիմնական իրավունքները:

Մասնավորապես՝ Օրենսգիրքը նախատեսում էր, որ դատավորի *ինքնաբացարկի* հարցի քննարկումը ևս (Օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ), (որը նույնպես ուղղված է, այդ թվում՝ խափանման միջոցի կիրառման/դրա ժամկետի երկարաձգման հարցի քննարկման շրջանակներում անձի՝ արդար դատաքննության իրավունքի «անկախ և անկողմնակալ» դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի բաղադրադարձի իրացումն ապահովելուն) պետք է նախորդի անձին կալանավորելու (դրա ժամկետի երկարաձգման) հարցի քննարկմանը:

Իրենց հերթին, դատավորի ինքնաբացարկի հիմքերը (Օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մաս, ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 71-րդ հոդված) իրենց բնույթով այնպիսին են, որ ուղղակիորեն կապված են տվյալ գործով *դատավորի անկողմնակալ լինելու հարցի հետ*:

Արդեն նշվեց, որ անգամ կալանքն/տնային կալանքն իբրև խափանման միջոցի կիրառելու (դրա ժամկետի երկարաձգման) հարցի քննարկման շրջանակներում ևս պետք է ապահովվի նշված հարցը քննող *դատավորի անկողմնակալությունը*, ուստիև, եթե դատավորին ներկայացվում է ինքնաբացարկի միջնորդությունը, ապա այդ հարցի քննարկման շրջանակներում է, որ դատավորը պարտավոր է, չհետաձգելով ինքնաբացարկի միջնորդության քննությունը և «առաջնահերթ չհամարելով այլ հարցի քննարկում», քննարկել և լուծել ինքնաբացարկի միջնորդությունը, **նոր միայն** իրավաչափ հնարավորություն ունենալ անցնելու անձի անձնական ազատությունը սահմանափակող խափանման միջոցի կիրառման (երկարաձգման) հարցին:

Ամբողջովին համանման տրամաբանությամբ էր, որ Օրենսգրքով սահմանվում էր նաև մեկ այլ հարցի՝ Օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով

նախատեսված հարցի քննարկում, նախքան խափանման միջոցի հարցի քննարկումն ու լուծումը:

Օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսվում էր քրեական հետապնդումը դադարեցնելու կամ վարույթը կարճելու հարցի քննարկումից հետո **նոր միայն** անցնել մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու, այդ թվում՝ կալանքը/տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառելու/դրա ժամկետը երկարաձգելու հարցին: Այս հարցի նման հաջորդականությամբ քննարկման օրենսդրի տրամաբանությունը պայանավորված էր Սահմանադրությամբ երաշխավորված անձի անձնական ազատության իրավունքի արդյունավետ երաշխավորմամբ (Սահմանադրության 27-րդ հոդված). անձի անձնական ազատության իրավունքի սահմանափակման հարցի քննարկման շրջանակում քրեական հետապնդումը/վարույթը բացառող հանգամանքի հաշվառումը պարտադիր է անձի անձնական ազատության սահմանափակման իրավաչափության պայմանի՝ «մեղադրանքի օրինականության (իրավաչափության)» ապահովման համար:

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը, հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայությունը պարզելու պարտադիր նախապայման դիտարկելով մեղադրանքի օրինականությունը, նկատել է, որ դրա անտեսումը «կարող է հանգեցնել անձնական ազատության ոչ իրավաչափ սահմանափակման» (2019 թվականի ապրիլի 16-ի ՄԴՈ-1453 որոշում): Այսպես՝ Սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով ձևավորված դատական պրակտիկան, շեշտադրել է, որ մեղադրանքի օրինականությունը, որպես կալանավորման պայման, ի թիվս այլնի, իր մեջ ներառում է «(...)անձի նկատմամբ քրեական հետապնդումը բացառող, այդ թվում՝ արարքի ապաքրեականացման **հանգամանքները հաշվի առնելը**» (2019 թվականի ապրիլի 16 ՄԴՈ-1453 որոշում) (ընդգծումը՝ Կենտրոնի): Այս լույսի ներքո Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ «(...)Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած»

արտահայտության սահմանադրական բովանդակությունը, հաշվի առնելով կալանավորելու եղանակով անձի անձնական ազատությանն առավել ինտենսիվ միջամտության համար բոլոր անհրաժեշտ նախադրյալների պատշաճ հիմնավորման պահանջը, ներառում է նաև *մեղադրանքի իրավաչափությունը*, որը, իր հերթին, պետք է խարսխվի *քրեական հետապնդումը բացառող բոլոր հանգամանքները (...)* *ժխտելու վրա»* (2019 թվականի ապրիլի 16 -ի ՍԴՈ-1453 որոշում) (ընդգծումը՝ Կենտրոնի):

Սահմանադրական դատարանը նշված որոշման շրջանակներում ուղիղ արձանագրել է, որ կալանավորման անհրաժեշտությունը պետք է հաստատվի փաստական, այդ թվում՝ քրեական հետապնդումը *բացառող հանգամանքները հերքող տվյալներով*:

Ասվածի համատեքստում պետք է հստակ ընդգծել, որ քրեական դատավարության շրջանակներում կալանավորելու (տնային կալանքի) ձևով անձի՝ Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված անձնական ազատության իրավունքի իրավաչափ սահմանափակումը ենթադրում է, առաջին հերթին, մեղադրանքի օրինականություն (իրավաչափություն) և դրա ստուգում դատարանի կողմից:

Իր հերթին, մեղադրանքի օրինականությունը (իրավաչափությունը), ներառելով նաև քրեական հետապնդումը/վարույթը բացառող հանգամանքների (առերևույթ) բացակայության պայմանը, անհրաժեշտաբար պայմանավորում է, որ անձի անձնական ազատության իրավունքի սահմանափակման քրեադատավարական ընթացակարգերում քրեական հետապնդումը/վարույթը բացառող հանգամանքների ստուգում իրականացվի (դրա առերևույթության մակարդակով), որպիսի պայմաններում, քրեական հետապնդումը բացառող հանգամանքները հերքող տվյալներով հավաստելուց **հետո միայն**, հնարավոր լինի անձի նկատմամբ կալանքը/տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառելու/դրա ժամկետը երկարաձգելու որոշման կայացումը:

Ասվածից ուղղակիորեն բխում է, որ կալանքի/տնային կալանքի (դրա երկարաձգման) քրեադատավարական ընթացակարգը չի կարող լինել արդյունավետ ու ծառայել իր նպատակին՝ հաստատապես երաշխավորելով անձի անձնական ազատության իրավունքի պաշտպանությունը, երբ նման որոշում կայացվի առանց քրեական հետապնդումը/վարույթը բացառող հանգամանքների բացակայությունը հաշվի առնելու/քննարկելու:

Այսուհանդերձ, օրենսդրական նոր կարգավորումների համատեքստում, էլնելով առաջնահերթություններից՝ կարող է ձևավորվել դատական պրակտիկա, որի ընթացքում անձի նկատմամբ կալանքը/տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառելու (դրա ժամկետը երկարաձգելու) հարցը քննարկվի և անձի նկատմամբ անազատության հետ կապված խափանման միջոց կիրառվի Օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ լրացված մասի հիման վրա՝ առանց քրեական վարույթը/հետապնդումը բացառող հանգամանքներին անդրադառնալու՝ վտանգելով անձի անձնական ազատության իրավունքը:

2.2.Եզրակացություններ

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ քննարկվող օրենսդրական փոփոխություններով Օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասի լրացումը խնդրահարույց է անձի անձնական ազատության, արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրեր՝ «օրենքի հիման վրա ստեղծված» և «անկախ և անկողմնակալ» դատարանի կողմից գործի քննության իրավունքի համատեքստում:

Այս առումով Կենտրոնը հորդորում է Ազգային ժողովին շուտափույթ վերացնելու քննարկվող կարգավորումը:

2.3.Առաջարկություններ

Օրենսդրական քննարկվող խնդրահարույց լրացման համար հիմք հանդիսացած իրավակիրառական պրակտիկայում առկա խնդիրը (տե՛ս վերևում)

հեշտությամբ կարող էր լուծվել Օրենսգրքի համատասխան նորմերի համակարգային մեկնաբանման և կիրառման միջոցով:

Մասնավորապես՝ Օրենսգրքի 263-րդ հոդվածի 3-րդ մասը թույլատրում է, ոչ թե չորոշելով վարույթի ընդդատությունը, այլ որոշել ընդդատությունը, սակայն **մինչև** վարույթն ըստ ընդդատության **փոխանցելը** կատարել **անհետաձգելի վարութային գործողություններ**:

Ըստ այդմ՝ Օրենսգրքի համապատասխան դրույթների համակարգային մեկնաբանությունն ամբողջովին հնարավորություն էր տալիս առանց օրենսդրական նման խնդրահարույց լրացման և ըստ այդմ՝ առանց անձի անձնական ազատության իրավունքի և արդար դատաքննության իրավունքների վտանգման, իրավակիրառ պրակտիկայում առաջացող տեխնիկական այդ խնդիրն իրավական նորմերի մեկնաբանությամբ տեղավորել «անհետաձգելի վարութային գործողության» բովանդակային շրջանակներում և մինչ վարույթն ըստ ընդդատության փոխանցելը, լուծել նաև կալանքի/տնային կալանքի (դրա ժամկետի երկարաձգման) հարցը: